

Հաստատում եմ՝ 16 մարտի 2022 թ.

Հայ-Ռուսական (Սլավոնական) համալսարանի

Գիտական գծով պրոռեկտոր,

փիլիսոփայական գիտությունների դոկտոր,

Ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների թեկնածու,

պրոֆեսոր Ավետիսյան Պարզև Սերգեյի

ԿԱՐՏԻՔ ԱՌԱՋՍՏԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Լորետա Արայի Բազիկյանի

«Անդրադարձության և փոխադարձության կառույցների գործառական և գործաբանական հայեցակերպերը անգլերենում (հայերենի զուգադրությամբ)»

Ժ.02.07 «Ռոմանագերմանական լեզուներ» մասնագիտությամբ բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին

Անդրադարձության ու փոխադարձության կարգերը բնորոշ են ինչպես բնագիտական, այնպես էլ հասարակագիտական ոլորտներին: Ցանկացած մասնիկ պտտվելով իր առանցքի շուրջ, պտտվում է նաև այլ համակարգերի շուրջ: Մեփական զգացմունքների, մտքերի, արարքների գիտակցումն ու հաղորդակցումը, վերագնահատումն ու արժևորումը բացահայտում են անհատականությունը որպես ուսումնասիրության թե՛ սուբյեկտ, և թե՛ օբյեկտ:

Հենակետ ընդունելով անտիկ փիլիսոփայության սկզբունքը «Սկզբում ճանաչիր ինքդ քեզ», փիլիսոփայական և լեզվաբանական միտքը ուղղորդվում է դեպի ինքնաճանաչում և դրանից բխող աշխարհընկալում:

Լորենտա Արայի Բազիլյանի ատենախոսությունը նվիրված է անդրադարձ և փոխադարձ բայերի և համապատասխան դերանունների լեզվաոճական, շարահյուսական և գործառական առանձնահատկությունների ուսումնասիրությանը: Աշխատանքում վերլուծվել է նաև անդրադարձ և փոխադարձ բայերով և դերանուններով կազմված կառույցների գործաբանական զարգացման հարացույցը, որը բխում է և պայմանավորված է հաղորդակցման տարբեր ձևերով, վերջինիս նպատակով և նոր շարահյուսական համակցություններով:

Դիտարկելով աշխատանքը անդրադարձության և փոխադարձության կարգերը գործառական և գործաբանական լեզվաբանության լույսի ներքո՝ հեղինակը ուսումնասիրության *առարկա է դիտարկել* անդրադարձ և փոխադարձ բայերով և դերանուններով կազմված կառույցները, որոնք տարբեր համատեքստերում ձևեր են բերում գործառական և նոր իմաստագործաբանական առանձնահատկություններ:

ձեռագրոսությունը *արդիական է՝* պայմանավորված նրանով, որ անդրադարձ և փոխադարձ կառույցների բազմակողմանի և համակարգված վերլուծության անհրաժեշտությունը մեծապես կարևորվում է գործառական և գործաբանական լեզվաբանության դիրքերից: Բացի այդ, անգլերենի և հայերենի զուգադրական վերլուծությունը մեծապես նպաստում է լեզվական փաստերի առավել մանրակրկիտ և համապարփակ մեկնաբանությանը՝ ի հայտ բերելով լեզուների միջև գոյություն ունեցող ընդհանուր և տարբերակիչ հատկությունները:

Իր ուսումնասիրության մեջ ատենախոսը նպատակ է ունեցել բացահայտել անգլերենի անդրադարձ և փոխադարձ կառույցների գործաբանական առանձնահատկությունները, ուսումնասիրել դրանց տեսակներն ու գործառույթները լեզվի տարբեր մակարդակներում՝ հայերենում համարժեք կառույցների ընդհանրությունների և տարբերությունների զուգադրությամբ:

Այս նպատակին հասնելու համար ատենախոսության հեղինակն իր առջև դրել է որոշակի հետազոտական խնդիրներ, ինչպես օրինակ, որոշել անդրադարձության և փոխադարձության կարգերի տեղը լեզվի համակարգում, հետազոտել անդրադարձ և փոխադարձ կառույցների դասակարգման հիմնական սկզբունքներն անգլերենում՝ զուգադրելով հայերենի հետ, ուսումնասիրել անդրադարձ կառույցների յուրահատկությունները երեք հիմնական մակարդակներում՝ իմաստային,

շարահյուսական և վերաբերային, մշակել անդրադարձ բայերի իմաստաբանական վերլուծության մեխանիզմը, որոշարկել անդրադարձ և փոխադարձ կառույցների շարահյուսական դասակարգման չափանիշները լեզվաբանության մեջ, անցկացնել անդրադարձ և փոխադարձ կառույցների իմաստաբանական-գործաբանական քննություն՝ վեր հանելով նշյալ կառույցներում առկա համապատասխան բայերի և դերանունների գործաբանական առանձնահատկությունները, քննել սաստկական անդրադարձ կառույցների իմաստակառուցվածքային և լեզվագործաբանական առանձնահատկությունները անգլերենում՝ համեմատելով հայերենի համարժեք կապակցությունների հետ:

Ատենախոսը կիրառել է կադապարման, փոխակերպման, համեմատման և զուգադրման, բաշխումային և վիճակագրական, ինչպես նաև բաղադրիչային և համատեքստային վերլուծության *մեթոդները*:

Ուսումնասիրության *գիտական նորույթն է* անգլերենի անդրադարձ և փոխադարձ կառույցների վերլուծությունը տարբեր մակարդակներում՝ ձևաբանական, շարահյուսական, իմաստաբանական և գործաբանական: *Նորույթն է* նաև այն, որ աշխատանքում առաջին անգամ կատարվել է անգլերենի և հայերենի անդրադարձ և փոխադարձ կառույցների զուգադրական վերլուծություն՝ ի հայտ բերելով դրանց միջև եղած նմանությունները և տարբերությունները: Հետազոտության արդյունքները նաև հնարավորություն են ընձեռել նորովի դիտարկել հայերենի համարժեք կառույցները:

Ատենախոսության *տեսական արժեքը* անգլերենի անդրադարձության և փոխադարձության կարգերի և դրանց հետ առնչվող կառույցների իմաստագործաբանական վերլուծությունն է:

Ուսումնասիրության *գործնական արժեքն* այն է, որ սույն հետազոտության արդյունքները կարող են օգտագործվել գործառական լեզվաբանության, գործաբանական լեզվաբանության, հանրալեզվաբանության ոլորտների ուսումնասիրություններում:

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք զլուխներից, որոնք համապատասխանաբար բաժանվում են ենթազլուխների, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության առաջին գլուխը՝ «Անդրադարձության և փոխադարձության կարգերի տեղը լեզվի համակարգում», անդրադառնում է բայասեռի քերականական կարգի բնութագրմանը և սահմանմանը, սեռերի քանակի և դրանց տարբերական հիմքերի քննարկմանը, արտասահմանյան և հայ լեզվաբանների տեսակետներին և տեսություններին, ինչպես նաև նշյալ կարգերի հայեցակերպին, ավանդական եզրույթներին և դրանց շուրջ ծավալվող մոտեցումներին:

Սույն գլխում անդրադարձ և փոխադարձ կառույցները հանգամանորեն ուսումնասիրվում են *Մերող քերականության* լույսի ներքո (*Generative Grammar*) Ն. Չոմսկու *Կառավարման և Միավորման տեսության* շրջանակներում (*Government-binding theory*):

Այս գլխում դիտարկված են նաև հայ լեզվաբանների կարծիքները և տեսությունները բայական սեռի և անդրադարձ ու փոխադարձ կառույցների վերաբերյալ:

Աշխատանքի երկրորդ գլխում՝ «Անդրադարձության կարգի գործառական և իմաստային-գործաբանական վերլուծությունը», ուսումնասիրվում են անդրադարձ կառույցների գործառույթները և եզրույթները, դրանց դասակարգումը արտասահմանյան և հայ հետազոտողների կողմից, ինչպես նաև անդրադարձ բայերի և դերանունների գործաբանական իմաստները, որոնք զուգորդվում են հայերենի համարժեք լեզվական միավորների հետ: Լորեսոա Բազիկյանի ատենախոսության արժանիքներից մեկն այն է, որ այն ունի երկու հավասարազոր՝ տեսական և չափազանց լայնածավալ գործնական ուղղվածություն: Ատենախոսությունը քննում է անգլերենի անդրադարձ կառույցների դասակարգման սկզբունքները, արդի հայերենի անդրադարձ կառույցների հիմնական տեսակները, անդրադարձ կառույցների շարահյուսական-իմաստաբանական դրսևորումները անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ, ներկայացնում է անդրադարձ կառույցների իմաստային դասակարգումը, անդրադարձ կառույցների շարահյուսական դասակարգման չափանիշները:

Այս գլխում ներկայացվում է նաև անդրադարձ կառույցների գործաբանական հայեցակերպը անգլերենում՝ հայերենի զուգադրությամբ, մասնավորապես՝ անդրադարձ բայերի և անդրադարձ դերանունների գործաբանական իմաստների

քննությամբ: Սույն գլխում քննարկվում են անդրադարձ դերանունների երկու տարբեր գործառույթները՝ անդրադարձ և սաստկական, ինչպես նաև ներկայացվում են անզլերենի և հայերենի շեշտող դերանունների կառուցատիպերը և լեզվագործաբանական ներիմաստները:

Անդրադարձությունը (reflexivity) հիմնարար հայեցակարգ է, որն իր տարբեր դրսևորումներով արտացոլվում է փիլիսոփայության, հոգեբանության, կրոնի, գրականության, մշակույթի մեջ: *Անդրադարձությունն* իր իմաստով հակադրվում է *փոխադարձությանը (reciprocity)*: Լեզվաբանության մեջ անդրադարձությունը բնորոշվում է որպես բայական իմաստային կարգ, որի հիմքում ընկած է սուբյեկտի և օբյեկտի միաձուլումը, ինչը պայմանավորված է նրանով, որ նախադասության սուբյեկտը միաժամանակ կատարում է օբյեկտի դերը:

Անզլերենի քերականագետները տարբերակում են անդրադարձ կառույցների երկու հիմնական տեսակ՝ «բառային» (*lexical/ verbal strategy*), որը բաղկացած է բուն անդրադարձ բայից (*to wash, to shave, to brush, to dress, to bathe, to shower, to recover, to perjure*) և «վերլուծական», որը հանդես է գալիս անցողական բայով և անդրադարձ դերանունով (*to wash oneself, to dress oneself, to pour oneself*) (*analytic/ nominal/ anaphoric/ periphrastic strategy*) (Belikova 2013:8, Haspelmath 2008:40-63, Payne 2011:307-311, Siloni 2008:451-498): Վերջիններս գրեթե նույնական են Մ. Բլոխի «օրգանական» և «ոչ օրգանական» (Blokh 2000:181-182), Ն. Կոբրինայի «լիարժեք» և «ոչ լիարժեք» (Кобрина и др. 2007:100-101), Վ. Նեդյակովի «իմաստային» և «ձևական» (Недялков 1985:3) և Ջ. Լայոնզի «ներակա» և «արտակա» (Лайонз 1978:383-384) տեսակների հետ:

Ատենախոսության երրորդ գլխում՝ «Փոխադարձության կարգի կառուցվածքային և իմաստային-գործաբանական քննությունը», ուսումնասիրվում են փոխադարձ կառույցների ավանդական եզրույթները, անզլերենի և հայերենի համապատասխան կառույցների կառուցվածքային տարբերակումները, նշյալ լեզուներում վերջիններիս ձևաբանական և շարահյուսական փոխակերպումները: Այստեղ ներկայացվում է նաև փոխադարձ բայերի երկու հիմնական մոտեցումների վերլուծությունը՝ իմաստաբանական-գործաբանական և շարահյուսական, քննարկվում են անզլերենի փոխադարձ դերանունների գործաբանական կիրառումները տարբեր շարահյուսական կազմություններում՝ հայերենի զուգադրությամբ:

Անգլիացի քերականագետները տարբերակում են փոխադարձ կառույցների նույնպես երկու հիմնական խումբ՝ «բառային» (*lexical/ verbal strategy*), որն արտահայտված է միայն փոխադարձ բայով (*to fight, to hug, to kill, to kiss, to divorce, to marry, to meet*) և «վերլուծական» (*analytic/ nominal/ anaphoric/ periphrastic strategy*), որը հանդես է գալիս փոխադարձ բայով և *each other* կամ *one another* փոխադարձ դերանվամբ (*to kiss each other, to marry one another, to meet each other*) (Belikova 2013:8, Haspelmath 2008:40-63, Maslova, Nedjalkov 2005:430-433, Payne 2011:310-311, Siloni 2008:451-498): Տվյալ տեսակների հետ համանման են Մ. Բլոխի «*օրգանական*» և «*նչ օրգանական*» (Blokh 2000:181-182), Ն. Կոբրինայի «*լիարժեք*» և «*նչ լիարժեք*» (Кобрина и др. 2007:100-101), Ե. Կյոնիգի և Շ. Կոկուտանիի «*անվանական*» և «*բայական*» (König, Kokutani 2006:276) տարբերակները:

Իմաստաբանական դիտանկյունից լեզվաբանները կիրառում են «*համաչափ*» (*symmetrical*) եզրույթը, որն առաջին անգամ ներմուծել է Ա. Խոլոդովիչը *փոխադարձ բայերի* համար՝ մեկնաբանելով դրանք որպես գործողության երկկողմանի ուղղվածություն ունեցող բայեր (*to argue (with), to date, to divorce, to fight*): Համաձայն շարահյուսական հայեցակերպի՝ լեզվաբանները գործածում են «*փոխադարձ*» (*reciprocal*) եզրույթը, որը համաչափ հարաբերությունների քերականական արտահայտությունն է:

Ուսումնասիրության ենթարկելով անգլերենի և հայերենի *each other* և *one another*, *իրար* և *միմյանց* փոխադարձ դերանունների կիրառության դեպքերը Բրիտանական (British National Corpus) (1000 օրինակ) և «ԱՐԵՎԱԿ» ազգային կորպուսներում (1000 օրինակ)՝ ատենախոսը գալիս է այն եզրակացության, որ *each other*-ը գործածվում է միջանձնյա ջերմ, մտերիմ հարաբերությունները շեշտելու համար, իսկ *one another*-ը գլխավորապես հանդես է գալիս չեզոք կամ պաշտոնական-ձևական, սառը վերաբերմունք արտահայտելու համար:

Եզրակացության մեջ ամփոփվում են հետազոտության արդյունքները:

Լորենտա Բազիկյանի ատենախոսությունը արդիական է թե՛ ուսումնասիրության առարկայի, թե՛ ընտրված մեթոդաբանության առումով: Աշխատանքում ընդգրկված է լայնածավալ փաստական նյութ, որը հեղինակին հնարավորություն է տալիս կատարել ծանրակշիռ ընդհանրացումներ: Ատենախոսությունը աչքի է ընկնում նյութի խորը

ուսումնասիրությամբ և իմացությամբ, շարադրանքի հստակությամբ, գիտական խորքային վերլուծությամբ:

Բարձր գնահատելով ատենախոսի կատարած աշխատանքը՝ կցանկանայինք ստանալ որոշ հարցերի պարզաբանումներ:

1. Ատենախոսության մեջ հեղինակը իմաստային սաստկացումը հիմնականում վերագրում է անդրադարձության կարգին. մի՞ թե այն բնորոշ չէ փոխադարձությանը:
2. Ֆորմալ տեսանկյունից փոխադարձությունը հաճախ հանդես է գալիս հստակ քերականական կառույցով: Արդյո՞ք փոխադարձության նշանակային իմաստը նույնպես հստակ է և չի ենթադրում երկակի մեկնաբանություն:
3. Փոխադարձության և անդրադարձության կարգերը բազմամշակութային են, միևնույն ժամանակ իրենց ուրույն դրսևորումները ստանում են յուրաքանչյուր լեզվում: Ո՞ր ոլորտն է ըստ ձեր հետազոտության՝ գործարանական, իմաստային, թե ֆորմալ քերականական առավել հարուստ ընդհանրություններով:
4. Արդյո՞ք անդրադարձ շեշտող դերանունների տեղաշարժը չի հանգեցնում իմաստային փոփոխության:

Վերը նշված նկատառումները ամենևին չեն նվազեցնում կատարված հետազոտության արժանիքները: Ընդհանուր առմամբ, կարելի է փաստել, որ իրականացված է բավականին լուրջ, տեսական և գործնական նշանակություն ունեցող հետազոտություն: Ատենախոսությունը բավարարում է թեկնածուական ատենախոսությանը ներկայացվող պահանջները և հեղինակն արժանի է իր հայցած բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանին: Մեղմագիրն իր կառուցվածքով և բովանդակությամբ համապատասխանում է ատենախոսությանը: Հեղինակի տպագիր հոդվածները արտացոլում են ատենախոսության բովանդակությունը:

Վերոնշվածը թույլ է տալիս միջնորդել ԵՊՀ գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի առաջ՝ Լորենտա Արայի Բազիկյանին շնորհելու բանասիրական գիտությունների թեկնածուի հայցվող աստիճանը Ժ.02.07 «Ռումանագերմանական լեզուներ» մասնագիտության գծով:

Գրախոսականը քննարկվել է հաստատվել է Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի 2022 թվականի մարտի 16-ին կայացած N5 նիստում:

Ատենախոսության քննարկմանը ներկա էին Ռուս-Հայկական (Սլավոնական) համալսարանի լեզվի տեսության և միջմշակութային հաղորդակցության ամբիոնի հետևյալ անդամները՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Կ. Մատինյանը, մ.գ.Պ., պրոֆեսոր Բ. Կարապետյանը, Բ.Գ.Պ., պրոֆեսոր Ա. Միմոնյանը, Բ.Գ.Պ., դոցենտ Մ. Սարինյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ն. Թովմասյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Ս. Թումանյանը և ուրիշներ:

Առաջատար կազմակերպություն՝
Ռուս-Հայկական (Սլավոնական)
համալսարանի լեզվի տեսության և
միջմշակութային հաղորդակցության
ամբիոնի վարիչ,
Բ.Գ.Պ., պրոֆեսոր՝

Ա. Ա. Միմոնյան

Հաստատում եմ՝ 16 մարտի 2022թ.

Գլխավորտուղար,
Բ.Գ.Թ.՝



Ռ. Ս. Կասաբարովա